



106. ԳԵՂԱՑԻՆ ՈՒ ԲԼԲՈՒԼ

Կէղնի շէղնի դեղացի մե, կունենա էգիմ՝, էգու ներքևի քունջ վարդի բուլ մե, օր չըմեն տարի կը թփոռոշկնա, վոնն բլբուլ մե նըստուկ:

Շեղ մե գեղացին գիջնա էգին՝ կը տեսնա՝ հանդե վըր ճղին նստուկ բլբուլ մեկ՝ խաղ կը դլգլցու, մեկ՝ զկտուց կը մտու վարդի կոկոմի մեջ, դթուփ անուշ կէնե:

— Տո՛, յա՛,— կըսե ուրին-ուրին գեղացին,— հերք չէ՛ նստուկ է վըր ճղին, մկա լե զթուփ կուտե. կանի ես ըդոր պտի պատճիմ:

Կըսե, կէրթա տուն, թոռի պես բան մե կը բերե, հատ ու կուտ շաղ կիտա գետնին, թոռով ու հատ ու կտով կը խաբե, կը բոնե Կբլբուլ, կը դնե մըջ խաֆաս:

էն վախտ աստծու հրամանքով բլբուլ լեզու կառնե, կը խոսա մարդու պես, կըսե.

— Մա՛րդ, դու չորի՞ն գիսի բոնիր, կտրիր իմ խաղ, ըդի աստված կը վերցո՞ւ:

— Վերցու չը վերցու՛ ես քըզի պտի պատճենք, չմքի դու կուտեր գիմ վարդի թփեր:

— Ներողութեն կը խնդրիմ, օր հմալ է՛ իրավունք քո՛ւմն է:

էս խոսքեր շատ դուր գիկան գեղացուն, զբլբուլ կը հանե խաֆասուց՝ կը թողե ազատ: Օր բաց կը թողե ազատ, բլբուլ կըսե.

— Դու ընձի լավութեն էրիր, ես լե քըզի կէնիմ: Իդա ծառի տակ օսկով լիք գուգում մե կա հորուկ, հա՛ն, տար քըզի, հա՛լալ է:

Գեղացին կը փորե, օսկով լիք գուգում կը հանե.

— Բլբու՛ւլ,— կըսե գեղացին,— գու կոցար հողով ծածկուկ օսկով լիք գուգում տեսներ, ես չը կոցա ղթոռ տեսնեք, օր գետնի յերեսն էր, գու պտի իմ մեղքին թողութեն տաս:

Բլբուլ թողութեն կիտա, գեղացին կառնե զօսկին, կէրթա տուն:

